«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1845-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N1845-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի «Վիճակախաղերի, շահումով խաղերի, խաղատների և ինտերնետ շահումով խաղերի լիցենզավորման պայմանների ու պահանջների կատարման ստուգաթերթերը հաստատելու մասին» N1845-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման N1 հավելվածի ՎԽ ձևում՝

ա. 2-րդ կետից հետո լրացնել 2.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

2.1	Արդյո՞ք կազմակերպիչն ապահովում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարումը:	1	Տեսողական, Փաստաթղթային	«Գովա 15-րդ 11.1-ի 12-րդ, և ՀՀ 2001թ. որոշմ

բ. 16-րդ կետի 2-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արդյո՞ք կազմակերպիչը տոտալիզատորի մասնակիցների հաշիվներին դրամական միջոցներ մուտքագրել և ելքագրել է անկանխիկ եղանակով: Անմիջականորեն (խաղասրահի միջոցով) խաղացողների կողմից կատարվող խաղադրույքների կատարումը կամ կազմակերպիչների կողմից խաղացողներին տրված անհատական խաղային քարտերին դրամական միջոցների համալրումն իրականացվում է անկանխիկ եղանակով:»,

գ.17-րդ կետից հետո լրացնել 17.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

17.1	Արդյո՞ք կազմակերպչի կողմից անկանխիկ գործարքներն իրականացվում են միայն բանկային հաշիվների կամ քարտերի միջոցով:	1	Տեսողական, Փաստաթղթային

դ. 33-րդ և 34-րդ կետերի 9-րդ սյունակում՝ «2014թ. հոկտեմբերի 7-ի N 272-Ն որոշում» բառերը փոխարինել «2021թ. հոկտեմբերի 12-ի N 152-Ն որոշում» բառերով,

2) Որոշման N1 հավելվածում՝ ստուգաթերթի կազմման համար հիմք ընդունվող նորմատիվ իրավական ակտերի ցանկի՝

ա. 5-րդ կետում՝ «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 07.10.2014 թ. N 272-Ն որոշում» բառերը փոխարինել «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 12.10.2021 թ. N 152-Ն որոշում» բառերով,

բ.7-րդ կետում՝ «N 128-Ա» բառը փոխարինել «N 128-Ն» բառով:

3) Որոշման N2 հավելվածի ՇԽ ձևում՝

ա.9-րդ կետի 2-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արդյո՞ք կազմակերպիչն ապահովում է խաղասրահում խաղանիշերի (ժետոնների) փոխանակումը միայն անկանխիկ եղանակով: Անմիջականորեն (խաղասրահի միջոցով) խաղացողների կողմից, բացառությամբ ոչ ռեզիդենտ նույնականացված խաղացողների, խաղադրույքների կատարումը կամ կազմակերպիչների կողմից խաղացողներին տրված անհատական խաղային քարտերին դրամական միջոցների համալրումն իրականացվում է անկանխիկ եղանակով:»:

բ. 13-րդ կետից հետո լրացնել 13.1-ին և 13.2 կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

13.1	Արդյո՞ք կազմակերպչի կողմից անկանխիկ գործարքներն իրականացվում են միայն բանկային հաշիվների կամ	2	Տեսողական, Փաստաթղթային

«Շա
ինտ
խաղ
մասի

	քարտերի միջոցով:			հոդվ
13.2	Արդյո՞ք կազմակերպիչն ապահովում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարումը:	1	Տեսողական, Փաստաթղթային	«Գովա օրենք 10-րդ, 11.2-ր 12.1-ի կառա հոկտ որոշմ

գ.24-րդ և 25-րդ կետերի 9-րդ սյունակում՝ «2014թ. հոկտեմբերի 7-ի N 271-Ն որոշում» բառերը փոխարինել «2021թ. հոկտեմբերի 12-ի N 151-Ն որոշում» բառերով,

4) Որոշման N2 հավելվածում՝ ստուգաթերթի կազմման համար հիմք ընդունվող նորմատիվ իրավական ակտերի ցանկի 5-րդ կետում՝ «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 07.10.2014 թ. N 271-Ն որոշում» բառերը փոխարինել «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 12.10.2021 թ. N 151-Ն որոշում» բառերով,

5) Որոշման N3 հավելվածի ԻՇԽ ձևում՝

ա. 11-րդ կետի 2-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արդյո՞ք կազմակերպիչը շահումը փոխանցում (վճարում) է անկանխիկ եղանակով՝ հայկական դրամով։»:

բ. 12-րդ կետի 2-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արդյո՞ք կազմակերպիչը շահումը չի փոխանցել (վճարել) այն հաշիվներին, որոնցից չեն կատարվել մասնակցության համար նախատեսված անկանխիկ վճարները: Ինչպես նաև արգելել է անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում մասնակցության համար նախատեսված վճարների ընդունումը և շահումների տրամադրումը կանխիկ գումարով։»:

գ. 13-րդ կետից հետո լրացնել 13.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

13.1	Արդյո՞ք կազմակերպչի կողմից անկանխիկ գործարքներն իրականացվում են միայն բանկային հաշիվների կամ քարտերի միջոցով:	2	Տեսողական, Փաստաթղթային	«Շահ ինտ խաղ մասի հոդվ

դ.18-րդ կետից հետո լրացնել 18.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ.

18.1	Արդյո՞ք կազմակերպիչն ապահովում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարումը:	1	Տեսողական, Փաստաթղթային	«Շահ ինտեր խաղե մասի հոդվ կետ, օրենք 10-րդ, 11.2-ր 12.1-ի կառա հոկտ որոշմ

ե. 23-րդ և 24-րդ կետերի 9-րդ սյունակում՝ «2014թ. հոկտեմբերի 7-ի N 271-Ն որոշում» բառերը փոխարինել «2021թ. հոկտեմբերի 12-ի N 151-Ն որոշում» բառերով,

6) Որոշման N3 հավելվածում՝ ստուգաթերթի կազմման համար հիմք ընդունվող նորմատիվ իրավական ակտերի ցանկի 5-րդ կետում՝ «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 07.10.2014 թ. N 271-Ն որոշում» բառերը փոխարինել «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 12.10.2021 թ. N 151-Ն որոշում» բառերով,

7) Որոշման N1 հավելվածի 42-րդ, N2 հավելվածի 33-րդ, N3 հավելվածի 32-րդ կետերի 9-րդ սյունակում՝«1-ին մաս» բառերը փոխարինել «1-ին և 2-րդ մասեր» բառերով,

8) ուժը կորցրած ճանաչել Որոշման N1 հավելվածի 33-րդ, N2 հավելվածի 24-րդ և N3 հավելվածի 23-րդ կետերը,

9) Որոշման N1 հավելվածի 29-րդ կետի 6-րդ սյունակում՝ «2» թիվը փոխարինել «1» թվով, N2 հավելվածի 15-րդ կետի 6-րդ սյունակում՝ «4» թիվը փոխարինել «3» թվով, N3 հավելվածի 18-րդ կետի 6-րդ սյունակում՝ «3» թիվը փոխարինել «2» թվով:

10) Որոշման N1 հավելվածում՝ ստուգաթերթի կազմման համար հիմք ընդունվող նորմատիվ իրավական ակտերի ցանկում լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետ.

«8.«Գովազդի մասին» ՀՀ օրենք»:»

11) Որոշման N2 հավելվածում՝ ստուգաթերթի կազմման համար հիմք ընդունվող նորմատիվ իրավական ակտերի ցանկում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետ.

«6.«Գովազդի մասին» ՀՀ օրենք»:»

12) Որոշման N3 հավելվածում՝ ստուգաթերթի կազմման համար հիմք

ընդունվող նորմատիվ իրավական ակտերի ցանկում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետ.

«6.«Գովազդի մասին» ՀՀ օրենք»:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: